ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ

«ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕԼԴԻՆԳԹՈՆԻ ՎԵՊԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ» Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ «ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕԼԴԻՆԳԹՈՆԻ ՎԵՊԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ» թեմայով ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի հետպատերազմյան արձակում իր կարևոր դերն ունեցող անգլիացի բանաստեղծ, արձակագիր և գրաքննադատ Ռիչարդ Օլդինգթոնի արձակի սոցիալական և բարոյական հիմնախնդիրների վերհանմանը:

Ատենախոսությունը՝ մեթոդաբանական բազային հենքով, գրականագետ-տեսաբանների ներկայացրած տեսական դրույթների հաշվառմամբ՝ գալիս է հավաստելու անգլիական գրական արձակում ի հայտ եկած զարգացումները: Աշխատանքի առավելություններից է, որ ատենախոսը մանրամասն և հետևողականորեն հետազոտել է սակավ անդրադարձ ունեցող, հայ ընթերցողին առաջին անգամ ներկայացվող գրողի ստեղծագործությունը:

Սույն ուսումնասիրությունն աներկբայորեն արդիական է, քանի որ թեմաները, որոնք արծարծված են Ռիչարդ Օլդինգթոնի երկերում՝ չեն կորցրել իրենց կարևորությունը մինչ օրս: Ժամանակավրեպ չեն սոցիալական և բարոյական խնդիրները, անհատի ներաշխարհի փլուզումը պատերազմյան և հետպատերազմյան ժամանակահատվածում, մարդու՝ հասարակությունից օտարման խնդիրը: Այս բոլոր հիմնահարցերը ներկայացված են Օլդինգթոնի երկերում, և դրանց ուսումնասիրությունը, գիտական շրջանառություն մտած գրական նյութը, հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել վերը նշված թեմաներին նվիրված գրականագիտական հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության մեջ ներկայացվում է Օլդինգթոն գրողի տեղն ու դերը անգլիական գրականության մեջ, իսկ նրա վեպերը քննության են առնվում ըստ ժամանակային երեք՝ նախապատերազմյան, պատերազմյան և հետպատերազմյան ենթափուլերի: Ատենախոսը նշում է, որ Օլդինգթոնի երկերը պատշաճ ուշադրության չեն արժանացել նույնիսկ անգլիական գրականագիտության մեջ, և թեպետ առկա են որոշ ուսումնասիրություններ՝ դրանք հիմնականում նրա վեպերի նկարագրություններ են և չեն ներառում հերոս-ժամանակաշրջան աղերսների, հոգեբանական հիմնախնդիրների և դրանց աղավաղման պատճառների մանրակրկիտ վերլուծություն: Ոստի ներկայացվող ատենախոսությունը գալիս է լրացնելու այդ բացը և պայմանավորում է աշխատանքի **նորույթը:**

Ատենախոսության *առաջին՝ «Պատերազմի ընկալումը զարգացման ընթացքի մեջ» գլխում* ատենախոսի ուշադրության կենտրոնում երկու հիմնախնդիր է՝ պատերազմի օլդինգթոնյան ընկալումները և պատերազմի գեղարվեստականացումը *«Հերոսի մահը» վեպում:* Թեպետ առաջին գլուխը վերնագրելիս ատենախոսը նշում է միայն «Հերոսի մահը» վեպը, վերլուծության է ենթարկում «Գնդապետ աղջիկը» և «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպերը նույնպես՝ որպես միմյանց շարունակություն սերունդների դրամայի, բախման, սիրո և խնդիրների արծարծման առումով:

Ատենախոսության առաջին գլխում Օլդինգթոնի արձակը համեմատվում է Հեմինգուեյի, Բարբյուսի և Ռեմարկի երկերի հետ, որի արդյունքում ատենախոսը գալիս է այն արդարացի եզրահանգմանը, որ Օլդինքթոնի վեպերը շահեկանորեն առանձնանում են այն առումով, որ գրական հերոսը մտավորական է, որ կան ժամանակային փոխասերումներ, որ պատումում հատկապես կարևորվում է իրադարձությունների հոգեբանական կողմը, անհատի ներաշխարհի աստիճանական ընթացքը, որն էլ, ի վերջո, հանգեցնում է միայնության դրամայի: Դրվատելի է նաև ատենախոսի կողմից ներկայացված՝ «Հերոսի մահը» վեպում պատումին և գրողի պոետիկային վերաբերող տարրերի՝ պատումի ձևին, կառուցվածքին, իմպրովիզացիային, ռիթմի և տեմպի փոփոխություններին, պաթոսի, հեգնանքի, ծաղրի առկայացման մասին վերլուծությունները:

Ատենախոսության **երկրորդ և երրորդ** գլուխներում սեր-էրոսի, կին-տղամարդ փոխահաբերությունների և հետպատերազմյան հարացույցում՝ մարդ-հասարակություն հիմնախնդրի թեմատիկան է: Ատենախոսի նպատակն է ուսումնասիրել օլդինգթոնյան հերոսների և արտաքին աշխարհի առնչությունների խնդիրը, ինչպես նաև այն ներքին

հոգեբանական վիճակները, որոնք ի հայտ են գալիս պատարազմյան և հետպատերազմյան իրականության հետ բախվելիս:

Օլդինգթոնի հերոսներն աչքի են ընկնում բարդ մտածողությամբ և անհանգիստ ներաշխարհով: Գրողը փորձում է ցույց տալ հետպատերազմյան կյանքի անկայունության և անհուսալիության ազդեցությունը մարդու վրա: Սակայն օգնության է գալիս հեղինակի լավատեսական վերաբերմունքը վատ երևույթների նկատմամբ, այն, որ չհասկացված և միայնակ մարդիկ մի օր կգտնեն ներդաշնակ վիճակ, սեր և գեղեցկություն, իսկ աշխարհը կդառնա ուրիշ:

Ատենախոսության *Եզրակացություն* բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է հաշվի առնել գիտական հետագա գործունեության ընթացքում: Մասնավորապես՝

1. Ատենախոսության արդիականության, գիտական խնդիրների ձևակերպումները երբեմն շտկման կարիք ունեն, օրինակ՝ գիտական հենք չունի ատենախոսի ներկայացրած՝ «***տեսանելի դարձնել հետպատերազմյան անհատի ֆիզիկական ու հոգեկան տանջանքի, հեղաշրջումների ընթացքն ու դրանից բխող հետևանքներն ըստ Օլդինգթոնի***» Կամ՝ «***Աշխատանքի թեման արդիական է, քանի որ պատերազմները, դժբախտաբար, բացառություն չեն մեր օրերում: Հեղինակի՝ հակապատերազմական տրամադրությունների բացահայտումներն ու քննարկվող խնդիրները.....կարող են օգտակար լինել մեզանում եղած կաթվածահար վիճակը, մարդու սոցիալականացման նույնպիսի խնդիրներ լուծելու, հաղթահարելու իմաստով***» //ատենախոսություն՝ էջ 5, 9, սեղմագիր՝ էջ 3, 4/ ձևակերպումները: Կարծում ենք, նման խնդիրները հիմնականում, պատմաբանների, սոցիոլոգների կամ հոգեբանների վերլուծության տիրույթում են, իսկ գրականագիտական վերլուծություններն այլ նպատակ պիտի հետապնդեն, և այլ ձևակերպումներ ստանան, օրինակ, թե՝ վերը նշված խնդիրները Օլդինգթոնի արձակում

ինչպիսի գեղարվեստական լուծումներ են ստացել, կամ գրողն ինչ գրական հնարների միջոցով է ներկայացրել, ասենք, կորուսյալ սերնդի կեցության կերպը և այլն:

2. Ատենախոսության մեջ սակավ են Օլդինգթոնի արձակի գեղագիտությանը նվիրված վերլուծությունը, պատկերային համակարգի ներկայացումը: Մինչդեռ գրողի ստեղծագործություններում կարելի է հանդիպել պատկերային և խորհրդանշային ամենատարբեր զուգորդումների: Կարծում ենք, աշխատանքն առավել կշահեր, եթե լիներ նաև Օլդինգթոնի արձակի նման վերլուծություն:

3. Աշխատանքի մեթոդաբանական հիմքը ենթաբաժնում /ատենախոսություն՝ էջ 8, սեղմագիր՝ էջ 5/ ատենախոսը խոսում է սոսկ գրականագիտական այն մեթոդների մասին, որոնցով առաջնորդվել է ուսումնասիրությունն իրականացնելիս: Սակայն **մեթոդը և մեթոդաբանությունը** տարբեր հասկացություններ են: Որոշակի առարկայի վերաբերյալ խնդրի բարձրաձայնումը, վարկածի մշակումը, տվյալների հավաքումը, վերլուծությունը և եզրակացությունները իրականացվում են հետազոտության **մեթոդների** միջոցով: Իսկ հետազոտության **մեթոդաբանությունն** այն հիմքն է, որն օգնում է հասկանալ կիրառվող մեթոդների արդյունավետության վրա ազդող որոշիչները[1];

Մեթոդաբանությունը տվյալ հետազոտության այն մետալեզուն է, տեսական այն դրույթները, գործիքակազմը, որոնք ապահավում են վերլուծության տեսական-մեթոդաբանական ապարատը:

4. Ատենախոսության մեջ երբեմն տեղ են գտել շարադրանքի լեզվիմաստային անհարթություններ, օրինակ՝ **մարդկային և պետական հարաբերություններ** /գուցե՝ մարդու և պետության միջև փոխհարաբերությունները /ատենախոսություն՝ էջ, սեղմագիր՝ էջ 9/, կամ՝ **Օլդինգթոնի համեմատությունը Հենիգուեյի և Ռեմարկի հետ** /գուցե՝ նրանց ստեղծագործությունների համեմատությունը / ատենախոսություն՝ էջ 5, սեղմագիր՝ էջ 6/ և այլն:

5. Ցանկալի կլիներ եզրակացություններ բաժնում լինեին առավել հստակ, գրականագիտական եզրաբանությամբ և ուսումնասիրված ստեղծագործություններին վերաբերող կոնկրետ եզրահանգումներ:

---

[1] /տես՝ https://hy.living-in-belgium.com/difference-between-research-method-and-research-methodology-607; .https://paara.am › wp-content › uploads › 2012/06/:

Այդուհանդերձ, վերը նշվածը չի նսեմացնում ատենախոսի կատարած ուսումնասիրության կարևորությունը: **ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ «ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕԼԴԻՆԳԹՈՆԻ ՎԵՊԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ»** թեմայով ատենախոսությունը ընդգրկուն և համապարփակ ուսումնասիրություն է և բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս միջնորդել ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդին՝ **Մարիամ Արամի Սիրունյանի «Պատերազմը և Օլդինգթոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ»** թեմայով ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գայանե Եղիազարյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
Անգլերենի ամբիոնի վարիչ

Գ. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ
Հասմիկ Փիլավջյան
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական քարտուղար
04.04.2022